



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«21» ցեկտեմբերի 2018թ.

N 159-Ա

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ  
ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ և 34-րդ հոդվածի 3-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով քաղաքաշինության բնագավառի գործունեությունների տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի եզրակացությունը՝


**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Տրամադրել լիցենզիա Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար լիցենզավորվող 18 իրավաբանական անձանց թվով 18 լիցենզիա և 18 ներդիր (համաձայն հավելված 1-ի):
2. Համարել կասեցված տարեկան պետական տուրքը չվճարած լիցենզավորված 26 իրավաբանական անձանց 34 ներդիրների գործողությունը մինչև տարեկան պետական տուրքը և ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար տարեկան պետական տուրքի 0.075 տոկոսի չափով հաշվարկված տույժը վճարելը (համաձայն հավելված 2-ի):

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի աշխատակազմի «Լիցենզավորման կենտրոն» գործակալության պետ՝ Բաղդասար Սնգրյանին՝

1) «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն լիցենզիան հանձնել լիցենզավորված անձանց՝ համապատասխան տարեկան պետական տուրքի վճարման դեպքում:

2) Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

 Invalid signature

X 

ԱՎԵՏԻՔ ԷԼՈՅԱՆ

Signed by: ELOYAN AVETIK 3304750558

Ա. ԷԼՈՅԱՆ

<<\_\_\_\_\_>> <<\_\_\_\_\_>> 2018թ.  
ք. Երևան